Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 3 -ի N 1140 - Ն որոշման

# Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

## Ներածություն

### Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման վիճակը Հայաստանի Հանրապետությունում

Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)՝ որպես մարդկանց անօրինական տեղափոխմամբ, հարկադրական շահագործմամբ պայմանավորված, միջազգայնորեն բնորոշված ժամանակակից ստրկության տեսակներից մեկի դեմ պայքարի կազմակերպումը, Հայաստանի Հանրապետությունում սկսվել է 2002 թվականից: 21-րդ դարի չարիք համարվող այս երևույթի դեմ պայքարն արդյունավետորեն մղելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել և իրականացվել են «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման հայեցակարգը և Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիրը» (ՀՀ կառավարության 15 հունվարի 2004 թվականի N 58-Ն որոշում) և «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը» (ՀՀ կառավարության 6 դեկտեմբերի 2007 թվականի N 1598 –Ն որոշում): Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ կառավարության 20 նոյեմբերի 2008 թվականի N 1385-Ա որոշմամբ հաստատվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը» /այսուհետ՝ ԱՈՒԿ/: Վերջինս սահմանում է համագործակցության այն համակարգը, որի միջոցով պետական կառավարման մարմիններն իրականացնում են իրենց պարտականությունները մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության և այն զարգացնելու ուղղությամբ՝ իրենց գործունեության մեջ ռազմավարական համագործակցություն ծավալելով քաղաքացիական հասարակության հետ: ԱՈՒԿ-ի հիմնական նպատակն արդյունավետ ուղի սահմանելն է՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին ծառայություններ մատուցելու համար, այդ թվում՝ կացարանի, մասնագիտական բժշկական և հոգեբանական օգնության, խորհրդատվության, կրթության կամ ուսուցման մատչելիության ապահովումը:

**Կառուցակարգային հենքը**

Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի սկզբից ի վեր կառուցակարգային մոտեցումը հիմնված է եղել երևույթի և նրա հետևանքների հետ առնչվող բոլոր գերատեսչությունների և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության

հաստատման վրա՝ դիտարկելով այն որպես արդյունավետության և առկա միջոցների ու հնարավորությունների համադրման ու նպատակային կառավարման լավագույն միջոց:

Դեռևս 2002թ. հոկտեմբերին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի (թրաֆիքինգ) հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Այն գործել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ղեկավարությամբ և ընդգրկել է բոլոր շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի փորձագետներին, ինչպես նաև հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների:

Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 861-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի նախագահությամբ, և ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 591-Ա որոշումը: Խորհրդի անդամներ են բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները: Խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծվել է նաև նրան կից աշխատանքային խումբ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության ղեկավարությամբ: Թե՛ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի, և թե՛ նրան կից աշխատանքային խմբի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում են ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների ու Հայաստանում ներկայացված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

<u>**Միջազգային իրավական հիմքը**</u>

Հայաստանի Հանրապետությունը միացել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին առնչվող բոլոր միջազգային և տարածաշրջանային իրավական փաստաթղթերին:

ՀՀ-ն վավերացրել է ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» 2000թ. կոնվենցիան և դրան կից՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» թիվ 1 ու «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամընտիր արձանագրությունները[1], ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին »[2], Եվրախորհրդի 2005 թվականի մայիսի 16-ի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» կոնվենցիան[3]:

Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» թիվ 29,

[1] ՀՀ համար ուժի մեջ են մտել 2003թ.-ի ապրիլի 19-ին:
[2] ՀՀ համար ուժի մեջ է մտել 2005թ.-ի հուլիս 30-ին:
[3] ՀՀ համար ուժի մեջ է մտել 2008թ. ապրիլի 19-ին:

«Հարկադիր աշխատանքի վերացման մասին» թիվ 105[4] և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին » թիվ 182 կոնվենցիային[5]:

Հայաստանը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ուղղությամբ ակտիվ համագործակցություն է ծավալել նաև Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ), Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ) և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) շրջանակներում՝ այդ թվում նաև համապատասխան իրավական ակտերի ու միջոցառումների մշակման ուղղությամբ:

<u>Ներպետական օրենսդրություն</u>

2003 թվականին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացվել էր նոր՝ 132-րդ՝ ՙՄարդկանց առևտուր՚ հոդվածը, որը 2006 թվականի հունիսին վերախմբագրվել է նոր տարբերակով, որով առավել հստակ և ամբողջական է սահմանվել թրաֆիքինգի հանցակազմը, ՙմարդկանց առևտուր՚ բառերը փոխարինվել են ՙշահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՚ ձևակերպմամբ: Ներառվել է նաև նոր՝ 132.1-րդ հոդվածը, որը սահմանում է առավել խիստ պատժամիջոցներ մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) իրականացնողների նկատմամբ:

Աշխատանքային շահագործման դեմ պայքարի համատեքստում հարկ է նշել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում ներառված այն հոդվածները, որոնք արգելում են հարկադիր աշխատանքը, բռնությունն աշխատողի նկատմամբ, մինչև 14 տարեկան երեխային աշխատանքային գործունեության մեջ ներգրավելը, ինչպես նաև այն հոդվածները, որոնք ապահովում են գործատուի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

Հաշվի առնելով Եվրախորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացումը Հայաստանի կողմից, անհրաժեշտություն առաջացավ ՀՀ քրեական օրենսգիրքը համապատասխանեցնել կոնվենցիայի պահանջներին: Այդ նպատակով Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի /այսուհետ՝ ԹԱԽ/ ներքո ստեղծվել է միջգերատեսչական իրավական հարցերով ենթախումբ՝ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ու նորմատիվ ակտերի ուսումնասիրության և համապատասխան առաջարկությունների ներկայացման նպատակով: ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներին ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանության և դրանում փոփոխությունների վերաբերյալ առաջարկները ենթախումբը 2010թ.-ի փետրվարին ներկայացրել է Խորհրդին և ստացել նրա հավանությունը:

2009թ.-ի նոյեմբերի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով հիմնականում առավել խստացված պատժաչափեր են սահմանվում թրաֆիքինգի հանցագործության համար:

[4] ՀՀ համար ուժի մեջ են մտել 2005թ. դեկտեմբերի 17-ին:
[5] ՀՀ համար ուժի մեջ է մտել 2006թ.-ի հունվարի 2-ին:

2009թ.-ին անց են կացվել քննարկումներ 2008թ.-ի նոյեմբերին ընդունված ՙՄարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի՚ կիրարկման շուրջ և նախանշված խնդիրների լուծումներով առաջարկություններ ներկայացվել՝ նշյալ կարգում համապատասխան փոփոխություններն իրականացնելու նպատակով: ՀՀ կառավարության կողմից 2010թ.-ի մարտի 11-ին ընդունվել է N 230-Ա որոշումը՝ ՀՀ կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

2009թ.-ի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրով տրվող սուբսիդիայի հիմքում դրվող ծախսերը տարբերակելու կարգը հաստատելու մասին» 1358-Ն որոշումը, որով կարգավորվում են թրաֆիքինգի զոհերին վերականգնողական կենտրոններում ծառայությունների մատուցման համար պետական ֆինանսավորման հարցերը:

2009թ.-ի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև ստորագրվել է Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը:

2009թ. ապրիլին ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության և Ռուսաստանի Դաշնության միգրացիոն ծառայության միջև փոխըմբռման հուշագիր է ստորագրվել, որը նպատակ ունի կարգավորել աշխատուժի միգրացիայի հարցերը և պաշտպանել աշխատանքային միգրանտների շահերը:

ՀՀ պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մշակվել և համաձայնեցվել է թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի օրինակելի ձևը, որը ՀՀ մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի կողմից 2009թ մարտի 11-ին կայացած նիստի ընթացքում արժանացել է հավանության:

**<u>2-րդ ազգային ծրագրի շրջանակը</u>**

2-րդ՝ 2007-2009թթ.-ի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը տրամաբանական շարունակությունն էր նախորդի: Եթե առաջին ազգային ծրագրի հիմնական նպատակը անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծումն էր՝ զուգորդելով կանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին աջակցելու և նրանց պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացմամբ, ապա երկրորդ ազգային ծրագիրը հիմնականում նպատակ էր հետապնդում առավել ամրապնդել պետության ջանքերը հատկապես կանխարգելման ու աջակցության ուղղություններով՝ անհրաժեշտ կառուցակարգային, ենթաօրենսդրական, ֆինանսական հիմք ստեղծելով ու զարգացնելով և ոլորտում գործող դերակատարների կարողությունների հզորացման ու կատարելագործման միջոցով: Այն հիմնված էր միջազգայնորեն լայն կիրառում ունեցող 3P մոտեցման վրա, որը ներառում է կանխարգելում, հետապնդում և աջակցություն հիմնասյուները և դրանց խաչաձևվող առնչակցությունները: 2-րդ ծրագրի նպատակներից էր նաև երևույթի վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումը, որը հնարավորություն կտար նորովի գնահատել

երկրում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) առումով առկա իրավիճակը ու ձևավորվող միտումները: Այդ առումով կարևոր նշանակություն ուներ ԱՄԿ աջակցությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից «Աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտություն» անցկացնելը 2009թ.-ի տարեվերջին: Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան առավել հստակ պատկերացում կազմել Հայաստանում վերջին 2 տարիներին աշխատանքային միգրացիայի ոլորտում ձևավորված միտումների ու հնարավոր աշխատանքային շահագործման մոտավոր ծավալների, տեսակների ու դրսևորումների մասին:

2-րդ ծրագրի իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել բնակչության շրջանում՝ ընդհանրապես, և ռիսկային խմբերում՝ մասնավորապես, լայնածավալ քարոզարշավների ու իրազեկման բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների անցկացմանը, այդ թվում նաև՝ զանգվածային լրատվամիջոցների ընդգրկմամբ, ինչպես նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթին ուղղակի ու հնարավոր առնչություն ունեցող պետական մարմինների պաշտոնյաների մասնագիտական վերապատրաստմանը: Կարևորվել է հասարակության հետ անմիջական աշխատանքը՝ զոհերի հայտնաբերման, զոհերին տրամադրվող աջակցության լուսաբանման և նրանց նկատմամբ բնակչության հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման համար:

2-րդ ծրագրի ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում ընդգրկված գերատեսչություններում շարունակվել է այս ոլորտով զբաղվող պաշտոնյաների առանձնացումը և, անհրաժեշտության դեպքում, առանձնացված օղակների ստեղծման գործընթացը՝ հաշվի առնելով նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի պահանջները: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունում ստեղծվել են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հատուկ ստորաբաժանումներ: Լրամշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը և դրանում ներառվել են թրաֆիքինգի խնդիրները:

2007թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 132 և 132.1 հոդվածներով վարույթ է իրականացվել 14 քրեական գործով: Նշված գործերով տուժող է ճանաչվել 36 անձ/ 132 հոդվածով՝ 6, իսկ 132.1 հոդվածով՝ 30/: Այս քրեական գործով դատապարտվել է 11 անձ, որոնցից 10-ը՝ ազատազրկման՝ 1-8 տարի ժամկետով:

2008թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 132, 1321 հոդվածների հատկանիշներով վարույթ է իրականացվել 13 քրեական գործերով, որոնցով մեղադրանք է առաջադրվել 22 անձի՝ ՀՀ քր. օր.-ի 132, 1321 հոդվածներով, ևս 1 անձի՝ ՀՀ քր. օր.-ի 38-262, 340 հոդվածներով: 22 մեղադրյալներից 4-ը դատապարտվել են 2-7 տարի 6 ամիս ազատազրկման: Տուժող /զոհ/ են ճանաչվել 34 անձինք, որոնցից 3-ը շահագործման պահին եղել են անչափահաս: Տուժող ճանաչված 20 զոհեր ուղղորդվել են «ԱՄՔՈՐ» և «Հույս և օգնություն» ՀԿ-ների վերականգնողական կենտրոններ՝ աջակցություն ստանալու:

2009թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 132, 1321 հոդվածների հատկանիշներով իրականացվել է վարույթ 16 քրեական գործերով /7-ը 2008թ.-ին հարուցված և 2009թ. փոխանցված գործեր են/, որոնցից 2-ը կարճվել են, 3-ը կասեցվել, 5 քր. գործ ավարտվել և ուղարկվել է դատարան, իսկ մնացած 6 գործերով անջատվել են մասեր, որոնք նույնպես ուղարկվել են դատարան: 2008թ.-ին հարուցված և 2009թ. փոխանցված գործերից 6-ով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել ևս 21 նոր զոհ և նոր 2 անձանց առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 1321-րդ հոդվածներով: Նախորդ տարիներին հարուցված, կասեցված այնուհետև 2009թ.-ին

վերսկսված 3 քրեական գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 12 նոր զոհեր և նոր 3 անձի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 132.1-րդ հոդվածներով: 1 քրեական գործ 2008թ.-ին հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի ՙԱնչափահասին մուրացկանության մեջ ներգրավելու՚ հատկանիշներով, փոխանցվել 2009թ., այնուհետև 12.02.2009թ.-ին վերաորակվել է 1321-րդ հոդվածի: Նշված գործով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 5 նոր զոհեր, ևս 1 անձի առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 1321-րդ հոդվածներով: Ընդհանուր առմամբ 2009թ.-ի ընթացքում հայտնաբերվել և տուժող են ճանաչվել 60 անձինք, որոնցից հետագա աջակցության նպատակով հասարակական կազմակերպություններ են ուղղորդվել 22 անձինք:

2009թ.-ի ընթացքում 11 անձինք դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 132.1-րդ հոդվածներով` 3-13 տարի ազատազրկման:

2-րդ ծրագրի իրականացման ժամանակահատվածում հարուցված գործերով հանրապետությունում ի հայտ են եկել ներքին թրաֆիքինիգի և երեխայի թրաֆիքինգի դեպքեր: Հայաստանը շարունակել է լինել սկզբնաղբյուր երկիր թրաֆիքինգի զոհերի գերակշռող մեծամասնության համար, թեև 1 գործով գրանցվել է նաև Հայաստանի` վերջնակետ երկիր լինելու փաստ: Վերջնակետ երկրներ են շարունակում լինել Արաբական Միացյալ Էմիրությունները, Թուրքիան և Ռուսաստանի Դաշնությունը: Վերջինս, ինչպես նաև Վրաստանը, շատ հաճախ օգտաործվում են տարանցման նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի առումով Հայաստանը հիմնականում ելքի երկիր է, արտերկրում զոհերի հայտնաբերման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, Հայ առաքելական եկեղեցու և մյուս հարանվանությունների, մշակութային կենտրոնների և սփյուռքահայ համայնքների կազմակերպությունների միջոցով: Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) մասին հիմնական տեղեկատվության հիմքը օպերատիվ և տարբեր պետական ու ոչ կառավարական կազմակերպություններից ստացված տեղեկություններն են:

2007-2009 թվականներին հայտնաբերված 130 մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին տրամադրվել է հոգեբանական, բժշկական, սոցիալական և իրավաբանական անհրաժեշտ օգնություն` հասարակական կազմակերպություններում ստեղծված երկու վերականգնողական և աջակցության կենտրոններում: Բացի դրանից, աշխատանքներ են իրականացվել հասարակության մեջ նրանց վերաինտեգրման համար:

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի` 2007-2009 թվականների ազգային ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Չնայած կատարված մեծածավալ աշխատանքին` Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդը և նրան կից աշխատանքային խումբը 2007-2009 թվականների ազգային ծրագրի իրականացման գործում առանձնանշել են որոշակի ուղղություններ, որոնցում բարելավումը հստակորեն իր անդրադարձը կունենա այդ երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման վրա:

Ի սկզբանե առանձնացված բյուջետային ֆինանսավորում չի նախատեսվել 2007-2009 թվականների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների համար, պայմանավորված նաև ազգային ծրագրի` ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումից հետո ընդունված լինելու հանգամանքով, ինչը բավականին բարդացրել և շատ

հաճախ հետաձգել է միջոցառումների իրականացումը: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ միջոցառումների հիմնական մասը կատարվել է միջազգային ու հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող այլ համադրելի միջոցառումների հաշվին: Սակայն, հաշվի առնելով խնդրի կարևորությունը, 2008 և 2009 թվականներին հնարավոր է եղել ՀՀ տարեկան պետական բյուջեներում որոշ միջոցառումների ֆինանսավորման համար առանձին հավելվածով հատկացումներ նախատեսել:

Ազգային ծրագրի իրականացման ընթացքում պարզորոշ դարձավ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի անվերապահ կիրառման անհրաժեշտությունը բոլոր ներգրավված կողմերի համար` զոհերին տրամադրվող աջակցությունը բարելավելու համար, ինչպես նաև պետական հովանավորությունը զոհերին ժամանակավոր ապաստանի տրամադրման գործում, այդ թվում նաև` առանձնացված վերականգնման կենտրոնի տեսքով:

Թեև ազգային ծրագրով զգալի միջոցառումներ են իրականացվել` ուղղված աշխատանքային թրաֆիքինգի կանխարգելմանը, սակայն դրա դեմ պայքարի, մասնավորապես` հետապնդման հարցում դեռևս բարդություններ կան` կապված հանցագործության ապացուցողական մասի և վերջնակետ երկրի իրավապահ մարմինների կողմից խնդրի առկայության լիարժեք ըմբռնման և համատեղ պայքարելու անհրաժեշտության հետ: Այս առումով արդեն իսկ որոշակի դրական տեղաշարժեր են արձանագրվել, սակայն դրանք բավարար չեն երևույթի դեմ արմատապես պայքար մղելու համար:

Ակնհայտ դժվարություններ կային մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին աջակցություն ցուցաբերելու հարցում, և այս ոլորտում ևս բարելավման զգալի ներուժ կա: Որոշակի խնդիրներ կան զանգվածային լրատվամիջոցներով զոհերի ներկայացման ձևաչափի և մոտեցումների հարցում, որոնք ոչ միշտ են համապատասխանում զոհերի իրավունքների առումով համապատասխան կոնվենցիաներով ստանձնած ՀՀ միջազգային հանձնառություններին:

Չնայած մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցներին և մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) իրականացնող անձանց բացահայտման ու նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ իրականացված զգալի աշխատանքներին, շարունակական բարելավման կարիք է զգացվում թե՛ մասնագիտական վերապատրաստման, թե՛ համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովման, թե՛ փոփոխվող միտումների վերլուծության հիման վրա մարտավարական մոտեցումների վերանայման և թե՛, ըստ անհրաժեշտության, զոհերի պաշտպանության ապահովման միջոցով:

Հաշվի առնելով 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և աշխատանքային խմբի շրջանակներում հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ համատեղ անցկացված կլոր-սեղան քննարկումների արդյունքները` Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կողմից մշակվել է 2010-2012 թվականների ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի նախագիծ` համապատասխան կատարողական ցուցիչներով:

Ներկայացված ռազմավարություններն ու գործողություններն ուղղված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և ներառված են 6 հիմնական բաժնում`

1) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում,

2) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում,

3) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանություն և աջակցություն,

4) համագործակցություն,

5) ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում,

6) համակարգում:

## I. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում

### Նպատակ 1. Օրենսդրական դաշտի կատարելագործում

Ռազմավարություն 1. Շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտի վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

Ռազմավարություն 2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն արդյունավետ դարձնելու նպատակով քննարկել «Լիցենզավորման մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը և առաջարկներ ներկայացնել դրա վերաբերյալ:

Ռազմավարություն 3. Կատարել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրան ենթարկված անձանց աջակցության հետ կապված ենթաօրենսդրական ակտերի վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

### Նպատակ 2. Միջազգային պայմանագրերին միացում, երկկողմանի պայմանագրերի ստորագրում

Ռազմավարություն 1. Աշխատանք ծավալել ՄԱԿ-ի «Բոլոր միգրանտ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության» վերաբերյալ կոնվենցիային միանալու ուղղությամբ:

Ռազմավարություն 2. Աշխատանք ծավալել Եվրոպայի խորհրդի «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» թիվ 93 կոնվենցիային միանալու ուղղությամբ:

Ռազմավարություն 3. Շարունակել աշխատանքները վերջնակետ երկրների հետ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության և դրան ենթարկված անձանց աջակցության տրամադրման նպատակով երկկողմանի համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ:

Ռազմավարություն 4. Շարունակել աշխատանք տանել աշխատուժի միգրացիայի հարցերի կարգավորման, մասնավորապես՝ կանոնավոր միգրացիայի հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև՝ աշխատանքային միգրանտների և

նրանց ընտանիքների անդամների շահերը պաշտպանելու նպատակով երկկողմանի միջկառավարական համաձայնագրեր կնքելու ուղղությամբ:

Ռազմավարություն 5. Հայաստանի Հանրապետության քաղաքացի` անօրինական միգրանտների վերադարձի, նրանց վերաինտեգրման կազմակերպման, ինչպես նաև կրկնամեկնման կանխարգելման նպատակով շարունակել աշխատանքներ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հավանական նպատակակետ հանդիսացող երկրների հետ` երկկողմանի միջկառավարական համաձայնագրեր ստորագրելու համար:

**Նպատակ 3. Օրենքների կիրառելիության ապահովում**

Ռազմավարություն 1. Կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրության` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդիրներին առնչվող դրույթների կիրառման վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:

Ռազմավարություն 2. Չխախտելով ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման հարցում ստանձնած միջազգային պարտավորությունները` առավել արդյունավետ դարձնել սահմանային վերահսկողությունը` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտման համար, այդ թվում` նաև տեխնիկական հագեցվածությունն ավելացնելու և կենսաչափական տվյալների արդյունավետ օգտագործման միջոցով:

Ակնկալվող արդյունքները

1. Կկատարելագործվի Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտը, այն կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության միջազգային հանձնառություններին:

2. Կապահովվի ընդունված օրենքների առավել արդյունավետ կիրարկումը և կվերացվեն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առկա հակասությունները, կբարելավվի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղված իրավական դաշտը:

3. Առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց աջակցությունը, նրանց վերադարձի կազմակերպումը, ինչպես նաև հանցագործների քրեական հետապնդումը:

4. Առավել արդյունավետորեն կիրականացվեն սահմանային անցակետերում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված գործողությունները:

5. Առավել արդյունավետորեն կպաշտպանվեն աշխատանքային միգրանտների` որպես խոցելի խմբի իրավունքները, կստեղծվեն հնարավորություններ կանոնավոր միգրացիայի համար, կապահովվեն աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շահերը և դրանց վերաբերյալ օրենքների կիրառումը, կապահովվի անօրինական միգրանտների անվտանգ վերադարձի ու վերաինտեգրման կազմակերպման վերաբերյալ երկկողմանի միջկառավարական համաձայնագրերի դրույթների կիրառումը:

## II. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում

### Նպատակ 1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում

Ռազմավարություն 1. Շարունակել կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ լայնածավալ քարոզարշավներ, հատկապես ռիսկային խմբերում (գործազուրկներ, արտազնա աշխատանքի մեկնողներ, փախստականներ, կանայք, երիտասարդություն):

Ռազմավարություն 2. Իրազեկման արշավների արդյունավետության բարձրացման նպատակով վերանայել թերթոնային քարոզչության իրականացման միջոցները և թիրախները, կատարել ազդեցության ուսումնասիրություն և քարոզչության եղանակների առանձնանշում` ըստ թիրախ խմբերի ու քարոզչության նպատակի, նպատակային խմբերի կարիքների ու փոփոխվող միտումների, այն առավել ընդգրկուն և ինտերակտիվ դարձնելով:

Ռազմավարություն 3. Հաշվի առնելով անօրինական միգրացիայի և աշխատանքային շահագործման (թրաֆիքինգի) առնչակցությունը, բնակչությանը տրամադրել արժանահավատ տեղեկատվություն օտար պետություններ մուտքի, կացության, աշխատանքային գործունեության իրականացման կարգերի և դրանցում տեղ գտած փոփոխությունների, ներգաղթային օրենսդրության, ապաստանի տրամադրման հարցերի առնչությամբ:

Ռազմավարություն 4. Օգտագործել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության միգրանտների սպասարկման կենտրոնների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության գործակալության կենտրոնների հնարավորությունները` տրամադրելով համապատասխան, մշտապես թարմացվող տեղեկատվական օժանդակություն բնակչությանը` արտազնա աշխատանքի պայմանների, հնարավորությունների, հնարավոր վտանգների և դրանցից խուսափելու եղանակների մասին:

Ռազմավարություն 5. Միգրանտներին անհրաժեշտ հակաթրաֆիքինգային տեղեկատվական նյութերով ապահովման նպատակով` շարունակել ՀՀ սահմանային անցակետերում համապատասխան օժանդակ նյութերի` ներդիրների, թերթոնների, թեժ գծերի համարներով էջանիշերի, կախանների և այլ միջոցների տրամադրում բնակչությանը մեկնման ժամանակ:

Ռազմավարություն 6. Քննարկել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի նպատակով գործող թեժ գծերի միասնականացման, պետության կողմից դրա ֆինանսավորման և օրը 24 ժամ գործելու հնարավորությունը:

Ռազմավարություն 7. Որպես թիրախ խումբ` կանանց շրջանում իրազեկման բարձրացման նպատակով իրականացնել հակաթրաֆիքինգային տեղեկատվական նյութերի տրամադրում կանանց կոնսուլտացիաներում:

Ռազմավարություն 8. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ երիտասարդության իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ:

Ռազմավարություն 9. Աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանը և մասնագիտական կողմնորոշմանը, տրամադրել խորհրդատվություն ու տեղեկատվություն կրթության, ուսուցման և աշխատանքի շուկայում մասնագիտական գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ, աջակցել

երիտասարդի՝ աշխատանքային կյանք մուտք գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը:

Ռազմավարություն 10. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում տարածել հակաթրաֆիքինգային նյութեր:

Ռազմավարություն 11. Համայնքային և եկեղեցական կառույցների ներգրավում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, մարդու իրավունքների ոտնահարման խնդիրներին արձագանքելու և զոհերին աջակցության նպատակով առկա հնարավորությունների մասին տեղեկացման և օգտագործման գործում:

Ռազմավարություն 12. Միջոցառումներ իրականացնել աշխատանքային շահագործման և մասնավորապես՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկման բարձրացման և դրա դեմ պայքարի մեխանիզմների ուղղությամբ փոքրամասնությունների, այդ թվում նաև՝ ազգային փոքրամասնությունների շրջանում:

Ռազմավարություն 13. Միջոցառումներ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկման բարձրացման և դրա դեմ պայքարի մեխանիզմների ուղղությամբ բանակում և հատկապես խաղաղապահ ուժերում, այդ թվում նաև՝ բանակում մարդու իրավունքների ուսուցման ծրագրերում համապատասխան դասընթացի ներմուծման միջոցով:

## Նպատակ 2. Բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ իրազեկության բարձրացում

Ռազմավարություն 1. Վերանայել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության կողմից մշակված ձեռնարկը և անցկացնել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողների համար վերապատրաստման դասընթացներ:

Ռազմավարություն 2. ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման դասընթացներ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում ՀՀ իրավիճակի և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ:

Ռազմավարություն 3. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակեպությունների համար, որոնք աշխատում են խոցելի խմբերի, հատկապես՝ կանանց ու երիտասարդության հետ, կազմակերպել ուսուցողական ծրագրեր՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, ԱՌԻԿ-ի և աջակցության վերաբերյալ նյութերի տրամադրմամբ:

Ռազմավարություն 4. Շարունակել կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի վերաբերյալ դասընթացներ՝ Հայաստանի Հանրապետության ԱԱԾ սահմանապահ ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության աշխատողների, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների և զբաղվածության պետական մարմինների աշխատողների, ինչպես նաև բուժաշխատողների ու ուսուցիչների համար:

Ռազմավարություն 5. Սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի որակավորման բարձրացման նպատակով ուսուցողական ծրագրերի/մոդուլների մշակում համակարգի քաղծառայողների համար, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման և զոհերին աջակցության հարցերով մասնագետների

պատրաստման ծրագրերի ներդրում և համապատասխան դասընթացների կազմակերպում:

Ռազմավարություն 6. Կազմակերպել հատուկ դասընթացներ մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և երեխաների ցերեկային հոգածության կենտրոնների ուսուցիչների և դաստիարակների համար՝ երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և աջակցության կազմակերպման վերաբերյալ:

Ռազմավարություն 7. «Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում). ձեռնարկ ուսուցիչների համար» ձեռնարկի ներդրում կրթական համակարգում և ուսուցիչների վերապատրաստման դասընթացների անցկացում:

Ռազմավարություն 8. ՀՀ երեխաների իրավունքների պաշտպանության կառույցների (Երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, Խնամակալության և հոգաբարձության համայնքային հանձնաժողովներ, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներ, ցերեկային խնամքի կենտրոններ) աշխատակիցների խորացված ուսուցում երեխաների թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման, կանխարգելման և աջակցության կազմակերպման ուղղությամբ:

Ռազմավարություն 9. Արդարադատության բնագավառի աշխատողների իրազեկության բարձրացման նպատակով արդարադատության բնագավառի և իրավապահ մարմինների վերապատրաստման հաստատություններում ներդնել ՙՀայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները՚ ձեռնարկը և շարունակել անցկացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով դասընթացներ:

Ռազմավարություն 10. ՀՀ գլխավոր դատախազությունում և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունում ներդնել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մոդուլը և մասնագետների վերապատրաստում անցկացնել:

Ռազմավարություն 11. ՀՀ ոստիկանության մասնագիտական գիտելիքները և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում պատրաստվածությունը բարելավելու նպատակով շարունակել կազմակերպել համապատասխան դասընթացներ՝ այդ թվում նաև առաջատար փորձ ունեցող երկրներում:

Ռազմավարություն 12. Իրավապահ մարմինների և աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների համատեղ վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ աշխատանքային թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման և կանխարգելման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ռազմավարություն 13. Պարբերաբար մասնակցել միջազգային խորհրդաժողովներին և սեմինարներին, ուսումնասիրել և առաջարկներ ներկայացնել միջազգային լավագույն փորձը և տարբեր խնդիրների լուծման մեխանիզմները ՀՀ-ում ներդնելու վերաբերյալ, այդ ուղղությամբ ակտիվ համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ:

Ռազմավարություն 14. Միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել սեմինարներ, ՙկլոր սեղաններ՚, տարբեր ռազմավարական քննարկումներ:

**Նպատակ 3. Անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում**

Ռազմավարություն 1. Շարունակել իրականացնել ՙՊետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների

շրջանավարտներին՝ ծրագիրը, ինչպես նաև, նշյալ շրջանավարտներին առաջնահերթության կարգով զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկումը:

Ռազմավարություն 2. Դպրոցականների, հատկապես՝ միջնակարգ դպրոցի բարձր դասարանների և ավագ դպրոցի համար մշակել և տարածել կրթական նյութեր, որոնք ներկայացնում են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգները և դրանցից խուսափելու հնարավորությունները, ինչպես նաև անձի խոցելիությունն ավելացնող գործոնների՝ սեռային խտրականության, գենդերային անհավասարության ու ընտանեկան բռնության անթույլատրելիությունը և դրանց կործանարար հետևանքները, յուրաքանչյուր մարդու արժանապատվության ու մարդու հիմնարար իրավունքների լիարժեք պաշտպանության կարևորությունը:

Ռազմավարություն 3. Մանկատների, հատուկ դպրոցների ու գիշերօթիկ խնամքի հաստատությունների սոցիալական աշխատողների և անչափահասների գործերով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատողների համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ ուղղված նաև զգոնության բարձրացմանը:

Ռազմավարություն 4. Խոցելի խմբերի երիտասարդների, հատկապես՝ մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների երիտասարդների համար մշակել զբաղվածության ծրագրեր և նրանց ընդգրկել առաջնահերթության կարգով:

Ռազմավարություն 5. Մշակել և ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված երեխաների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու ռիսկի նվազեցմանը, ներառելով նաև նախադրյալների վերացմանն ուղղված գործողություններ /տնային ծնունդներ, չգրանցված ծնունդների բացառում, կրթական համակարգում չընդգրկված կամ դուրս մնացած երեխաների հաշվառում և վերահսկողության սահմանում, փողոցի/թափառաշրջիկ երեխաներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության կազմակերպում, աշխատող անչափահասների հաշվառում և նրանց աշխատանքային իրավունքների ապահովման նպատակով հսկողության կազմակերպում, և այլն/:

Ռազմավարություն 6. Ուսումնական հաստատություններում ուսանողների և աշակերտների համար կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ դասախոսություններ:

Ռազմավարություն 7. Առողջապահության նախարարության տվյալների շտեմարանում իրականացնել հղի կանանց կենտրոնացված էլեկտրոնային հաշվառում /անձնագրային տվյալների ներառմամբ/:

Ռազմավարություն 8. Մշակել և ներկայացնել առաջարկություններ կիբերհանցագործությունների նկատմամբ երեխաների խոցելիությունը նվազեցնելու վերաբերյալ, այդ թվում նաև՝ սահմանափակումներ մտցնելով ինտերնետ ակումբներում անչափահասների սպասարկման ձևաչափերի մեջ /ժամանակ, կայքէջեր, ֆիլտրեր/:

**Նպատակ 4. Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացում**

Ռազմավարություն 1. Աղքատությունը և գործազրկությունը դիտելով որպես Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) նպաստող կարևոր գործոններ՝

1) զարգացնել բնակչության շրջանում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածությունը,

2) Հայաստանի Հանրապետությունում աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրերում որպես բաղադրիչ մաս ընդգրկել նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցառումները, հատկապես առավել խոցելի խմբերի համար: Թրաֆիքինգի հետ կապված հարցերը ներառել նաև կոռուպցիայի դեմ պայքարի, գենդերային, զարգացման և այլ ծրագրերում:

Ռազմավարություն 2. Գործազուրկ և փախստական կանանց համար իրականացնել ձեռներեցությամբ զբաղվելուն նպաստող աջակցության ծրագրեր, այդ թվում նաև՝ ա/ ձեռնարկատիրության գործունեությանն ուղղված մասնագիտական ուսուցման կազմակերպմամբ և բ/ հաջողված ծրագիր ներկայացնող ուսանածներին ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

Ռազմավարություն 3. Գործազուրկներին, հատկապես երիտասարդներին և կանանց աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցերում, նրանց համար կազմակերպել մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով, աջակցել երիտասարդի աշխատանքային կյանք մուտք գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը, այդ թվում՝ ա/ անհատական և խմբակային եղանակով խորհրդատվության և տեղեկատվության տրամադրմամբ, և բ/ գործատուի մոտ արտադրական փորձուսման կազմակերպմամբ:

Ռազմավարություն 4. Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց հասարակության մեջ վերաինտեգրելու, ինչպես նաև նրանց կրկնազոհացումից խուսափելու նպատակով կազմակերպել մասնագիտացման և վերամասնագիտացման դասընթացներ, ինչպես նաև իրականացնել ա/ զոհերի հաշվառում և մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ ընդգրկում, բ/ դասընթացների զուգորդում հետագա աշխատանքի տեղավորմանն աջակցությամբ, գործատուին աշխատավարձի փոխհատուցմամբ, սեփական բիզնեսի ստեղծմանն աջակցությամբ:

Ռազմավարություն 5. Շարունակել իրականացնել խոցելի խումբ կազմող, գյուղական վայրերում բնակվող կանանց զբաղվածության ապահովման ծրագրերը՝ դրանք զուգակցելով իրազեկության բարձրացման միջոցառումներով:

**Նպատակ 5. Զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացումը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման գործընթացում**

Ռազմավարություն 1. Հանրային և մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ համատեղ մշակել երկարաժամկետ կայուն աշխատանքային կանոնակարգ՝ ուղղված հանրապետությունում իրականացվող մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ հայտարարությունների, թեմատիկ ֆիլմերի անվճար հեռարձակման, սոցիալական գովազդի, զգոնության ուղերձների և այլնի միջոցով:

Ռազմավարություն 2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման նպատակով իրականացվող միջոցառումները պարբերաբար արտացոլել զանգվածային լրատվամիջոցներում, կանոնավոր դարձնել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի և նրան կից աշխատանքային խմբի անդամների մասնակցությունը հեռուստատեսային և ռադիո հաղորդումներին, քննարկումներին և հարցազրույցներին՝ հեռարձակվող և տպագիր մամուլում:

Ռազմավարություն 3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացման նպատակով շարունակել կազմակերպել հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, քննարկումներ, հանդիպումներ, ինչպես նաև ԶԼՄ-ներին տրամադրել համապատասխան նյութեր և տեղեկություններ:

Ռազմավարություն 4. Օգտագործել մամուլը և զովազդային միջոցները՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և դրա վտանգների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման, խարանի ընկալման և մտածելակերպի փոփոխության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի հանդեպ հանդուրժողականության բարձրացման հասնելու համար:

Ռազմավարություն 5. Մշտապես թարմացնել www.antitraficking.am կայքը, դրանում զետեղված՝ հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն արտացոլող նյութերը:

Ռազմավարություն 6. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերի վերաբերյալ լրագրողների իրազեկության բարձրացման, այդ երևույթի մասին մատուցվող տեղեկատվության էթիկական և մասնագիտական մոտեցումների կազմավորման նպատակով ա/ ԶԼՄ ներկայացուցիչների հետ համատեղ մշակել վարքագծային կանոններ մարդու իրավունքների ոտնահարումների զոհերի մասին լրատվություն տալու վերաբերյալ՝ հաշվի առնելով առկա օրենսդրության պահանջները և ՀՀ միջազգային հանձնառությունները, բ/ կազմակերպել սեմինարներ, դասընթացներ իրավական գրագիտության բարձրացման, վարքագծային կանոնների օգտագործման և լուսաբանման առանձնահատկությունների ու եղանակների մասին՝ հատկապես մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին վերաբերող գործընթացներում:

Ռազմավարություն 7. Մշակել և ներկայացնել առաջարկություններ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրա դեմ պայքարի մասին ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների համար ուսուցում կազմակերպելու վերաբերյալ՝ ըստ հնարավորության ուսումնական ծրագրերում այն ներմուծելով:

Ռազմավարություն 8. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի անունից սահմանել խրախուսական մրցանակ՝ երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լավագույն լուսաբանման համար:

Ակնկալվող արդյունքները

1. Կբարձրանա բնակչության, հատկապես նրա ռիսկային խմբերի՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգների մասին տեղեկացվածության մակարդակը, դրա դեմ պայքարելու առկա հնարավորությունների մասին իմացականությունը, հետևապես կփոքրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու հավանականությունը:

2. Կմեծանա թեժ գծերի հասանելիությունը բնակչությանը, կբարձրանա դիմելիությունը, հետևաբար՝ առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը:

3. Աշխատաշուկայում լրացուցիչ հնարավորությունների ստեղծմամբ կնվազեն երիտասարդների՝ արտագնա աշխատանքի մեկնելու հավանականությունը և դրան առնչվող աշխատանքային շահագործման ռիսկերը:

4. Կբարձրանա բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական և հասարակական կառույցների աշխատողների իրազեկությունը, կամրապնդվեն մասնագիտական կարողությունները և կխթանվի փոխհամագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերում:

5. Կխորանան աշխատանքներն անչափահասների շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման ուղղությամբ: Մանկատներում, հատուկ

դպրոցներում և գիշերօթիկ հաստատություններում կիրականացվեն սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրեր, կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հանդեպ զգոնությունը:

6. Կզարգացվի բնակչության շրջանում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածությունը՝ խոցելի խմբերի շեշտադրումով, ինչը կանխարգելիչ դեր կխաղա:

7. Հատուկ ուշադրություն կդարձվի աշխատանքային թրաֆիքինգի կանխարգելման հարցերին, աջակցություն կցուցաբերվի արտագնա աշխատանքների համար հանրապետությունից մեկնել ցանկացողներին ճիշտ կողմնորոշելու, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգից զերծ պահելու ուղղությամբ:

8. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման գործընթացում կբարձրանա զանգվածային լրատվամիջոցների դերը, կձևավորվեն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և մարդու իրավունքների ոտնահարումների զոհերի մասին մատուցվող տեղեկատվության էթիկական և մասնագիտական մոտեցումները:

## III. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանություն և աջակցություն

### Նպատակ 1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի բացահայտում և վերադարձի կազմակերպում

Ռազմավարություն 1. Շարունակել աշխատանքները սահմանային անցակետերում ժամանակավոր կացարաններ ստեղծելու ուղղությամբ:

Ռազմավարություն 2. Տրամադրվող աջակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ուղղորդման կարգի իրականացման գործում ներգրավված գործընկերների ուսուցման և վերապատրաստման աշխատանքները:

Ռազմավարություն 3. Ուսումնասիրել զոհերի սեռային և տարիքային առանձնահատկությունների հիման վրա հարցաքննության մեթոդները, մշակել զոհերի, հատկապես՝ անչափահաս զոհերի հարցաքննության պայմանների վերաբերյալ մոտեցումներ և ներկայացնել առաջարկություններ գործող ընթացակարգերում դրանց ներդրման վերաբերյալ:

Ռազմավարություն 4. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի հայտնաբերման և նույնացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով անցկացնել ոստիկանության, սահմանապահ մարմինների աշխատողների, սոցիալական աշխատողների, հարցազրույց վարողների մասնագիտական մակարդակը բարձրացնող դասընթացներ:

Ռազմավարություն 5. Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների և դրական փորձի վրա՝ մշակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց նույնացման չափանիշներ և ներդնել դրանք՝ զոհերին առնչվող մարմինների և կազմակերպությունների կողմից կիրառման համար:

Ռազմավարություն 6. Շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողների հետ՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի բացահայտման և նրանց՝ հայրենիք վերադարձն ապահովելու համար:

Ռազմավարություն 7. Շարունակել հատուկ դասընթացների անցկացումը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի ինքնության պարզաբանման գործընթացում սահմանապահների և ոստիկանության աշխատակիցների

մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով՝ հաշվի առնելով նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց նույնացման չափանիշները:

**Նպատակ 2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին օգնության և աջակցության իրականացում**

<u>Ռազմավարություն 1.</u> Լիարժեքորեն կիրառել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ուղղորդման կարգը՝ զոհերին տրամադրելով կարգով սահմանված աջակցությունը, այդ թվում նաև՝ բժշկական, սոցիալական, հոգեբանական, իրավական օգնություն և խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպել նրանց վերականգնողական աշխատանքները:

<u>Ռազմավարություն 2.</u> Իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ միջոցների ուսումնասիրություն և կարիքների գնահատում, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀՀ իրավապահ համակարգում դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն ապահովող առանձին մասնագիտացված ստորաբաժանում ստեղծելու և նրա գործունեության կարգի վերաբերյալ:

<u>Ռազմավարություն 3.</u> Կատարելագործել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի անվտանգության, անձնական տվյալների գաղտնիության և օրենքով նախատեսված մյուս պաշտպանական միջոցների ապահովման մեխանիզմները:

<u>Ռազմավարություն 4.</u> Քննարկել և առաջարկություններ ներկայացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց վերականգնողական կենտրոնների/ ապաստանների կարգավիճակի, տեսակի, նրանցում մատուցվող ծառայությունների, մատուցման եղանակների և ծառայությունները պայմանագրային հիմքով իրականացնելու պայմանների ու ներկայացվող պահանջների մասին:

<u>Ռազմավարություն 5.</u> Մշակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչներ, աշխատանք տանել ծառայությունների տեղական ցանցի ստեղծման և զարգացման ուղղությամբ՝ ծառայությունների մատչելիությունը ապահովելու նպատակով:

<u>Ռազմավարություն 6.</u> Վերականգնողական գործընթացի ավարտից հետո, ինչպես նաև կրկնազոհացումը կանխելու նպատակով իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին և նրանց ընտանիքի անդամներին հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված ծրագրեր, այդ թվում զոհերին ընդգրկելով մասնագիտացման և վերամասնագիտացման դասընթացների մեջ և զուգորդելով նրանց հետագա աշխատանքի տեղավորմանն աջակցությամբ:

<u>Ռազմավարություն 7.</u> Քննարկել և առաջարկություն ներկայացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին հատուցում տրամադրելու նպատակով պետության կողմից համապատասխան ֆոնդ(եր) ստեղծելու մասին:

<u>Ռազմավարություն 8.</u> Բնակչության դիմելիության ավելացման նպատակով լայնորեն տարածել տեղեկատվություն հանրապետությունում տրամադրվող սոցիալական աջակցության, զբաղվածության հարցերով և առողջապահական անվճար ծառայությունների մասին:

Ակնկալվող արդյունքները

1. Առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց վերականգնողական կենտրոններ ուղղորդումը և նրանց` կարգով սահմանված աջակցության տրամադրումը:

2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի նույնացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով կներդրվի նույնացման, ինքնության հաստատման չափանիշների համակարգ, կբարձրացվի նույնացում իրականացնող մարմինների մասնագիտական մակարդակը և կբարելավվի դրանց կիրառումը:

3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին կտրամադրվի ԱՌԻԿ-ով սահմանված օժանդակություն և բժշկական, սոցիալական, հոգեբանական ու իրավական աջակցություն, կկազմակերպվեն նրանց վերականգնողական աշխատանքները, աջակցություն կցուցաբերվի նրանց աշխատանքով ապահովելու համար:

4. Կապահովվեն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի անվտանգությունն ու անձնական տվյալների գաղտնիությունը, առավել արդյունավետ կդառնա դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, ինչը դրական ազդեցություն կունենա հանցագործության բացահայտման և պատժման տեսանկյունից:

5. Առավել արդյունավետ և մասնագիտական բարձր որակով կիրականացվի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց աջակցության տրամադրումը վերականգնողական կենտրոններում/ ապաստաններում:

6. Գործող ամբողջական համակարգի հանդեպ վստահության բարձրացմամբ կավելանա նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի դիմելիությունը` հանցագործության դատապարտման, հանցագործների հետապնդման, օգնություն և աջակցություն ստանալու նպատակով, հետևաբար կդյուրացվի նրանց հայտնաբերումը:

7. Համապատասխան ֆոնդերի ստեղծմամբ հնարավորություն կստեղծվի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին հատուցում տրամադրելու, ինչը կօժանդակի նրանց` հասարակության մեջ վերաինտեգրվելու և կրկնազոհացումից խուսափելու գործընթացին:

## IV. Համագործակցություն

### Նպատակ 1. Միջազգային համագործակցություն

Ռազմավարություն 1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման նպատակով լայնորեն համագործակցել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

Ռազմավարություն 2. Շարունակել զարգացնել պետական կառույցների և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների /ՄԱԿ, ԱՄԿ. ՄՄԿ , ԵԽ, ԵԱՀԿ, ԱՊՀ, ՀԱՊԿ, ՄՕՏՀ և այլն/ համագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի, զոհերի ուղղորդման, նրանց պաշտպանության, վերականգնողական կենտրոնների աշխատանքների բարելավման ուղղությամբ:

Ռազմավարություն 3. Մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) հանցագործություն իրականացնողների և զոհերի հայտնաբերման ու վերջիններիս շահագործումից ազատելու նպատակով ընդլայնել և բարելավել համագործակցությունը դիվանագիտական հաստատությունների, օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների (Ինտերպոլ, Եվրապոլ) հետ:

Ռազմավարություն 4. Բարելավել փոխհամագործակցությունը օտարերկրյա իրավապահ մարմինների հետ` թրաֆիքինգով զբաղվողներին, այդ թվում` հետախուզման

մեջ գտնվողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև հանցագործությունների վերաբերյալ ապացույցներ կուտակելու նպատակով:

**Նպատակ 2. Տարածաշրջանային և միջգերատեսչական համագործակցություն**

Ռազմավարություն 1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ համատեղ պայքարում ամրապնդել գործնական կապերը տարածաշրջանային մակարդակով, մասնավորապես` տարանցման և նպատակակետ երկրների գործընկերների հետ` հետագա ընդլայնման հեռանկարով:

Ռազմավարություն 2. Ընդլայնել համագործակցությունը սահմանային վերահսկողության մարմինների միջև, այդ թվում` նաև ուղիղ կապ հաստատելու և ամրապնդելու միջոցով:

Ռազմավարություն 3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ընդլայնման համար արդյունավետորեն օգտագործել ստեղծված և գործող տեղական ու տարածաշրջանային ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների ցանցերը:

Ռազմավարություն 4. Բարելավել փոխհամագործակցությունը ՀՀ տարածքային ստորաբաժանումների հետ` ըստ ոլորտների, այդ նպատակով, ըստ անհրաժեշտության, մշակել և ներդնել համապատասխան կանոնակարգեր:

Ակնկալվող արդյունքները

1. Ազգային ծրագրի իրականացմանն օժանդակելու նպատակով կշարունակվի համագործակցությունը ոլորտում ներգրավված բոլոր միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների և դոնոր երկրների հետ:

2. Կշարունակվեն ընդլայնվել և խորանալ կապերը տարածաշրջանի իրավապահ, սահմանային վերահսկման մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների միջև:

3. Կապահովվի մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) հանցագործությունների հետաքննման և բացահայտման մասին տեղեկատվության փոխանակումը:

4. Կապահովվեն միջազգային և հասարակական կազմակերպությունների օգնությունն ու օժանդակությունը հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ առավել արդյունավետ պայքարի կազմակերպմանը:

5. Կբարելավվի աշխատանքային կապը միջգերատեսչական մակարդակով և կհստակեցվեն տարածքային համագործակցության ընթացակարգերը:

## V. Ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում

Ռազմավարություն 1. Կատարել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով զբաղվող Հայաստանի Հանրապետության պետական կառույցների աշխատանքների կատարման ժամանակ առաջացած խնդիրների վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ դրանք բարելավելու վերաբերյալ:

Ռազմավարություն 2. Քննարկել Հայաստանի Հանրապետության տարածքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) չափերի և բնութագրերի վերաբերյալ ուսումնասիրությունները պարբերական դարձնելու հնարավորությունները:

Ռազմավարություն 3. Կատարել ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դրդապատճառների ուսումնասիրություն և վերլուծություն, բացահայտել նպաստող երևույթները, ներկայացնել դրանց կանխարգելման և, ըստ անհրաժեշտության, օրենսդրորեն կարգավորման վերաբերյալ առաջարկություններ:

Ռազմավարություն 4. Համալրել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի տվյալների ու հանցագործություն կատարածների շտեմարանը և պատրաստել վերլուծական նյութեր դրանց հիմքով:

Ռազմավարություն 5. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթին առնչվող՝ հասարակական կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և բարձրացված խնդիրների շուրջ միջոցառումների մշակում:

Ռազմավարություն 6. Մշակել և ներդնել գնահատման ցուցիչներ Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի իրականացման ժամանակացույցում:

Ակնկալվող արդյունքները

1. Կբարելավվեն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով զբաղվող Հայաստանի Հանրապետության պետական համակարգի կառույցների աշխատանքները, վեր կհանվեն ծագած խնդիրները, և ուղիներ կնախանշվեն՝ դրանց լուծում տալու համար:

2. Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում կօգտագործվի լավագույն միջազգային փորձը:

3. Կստացվեն հավաստի տվյալներ հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդրի, դրա չափերի ու բնութագրերի, դրդապատճառների ու նպաստող երևույթների մասին, ինչը հնարավորություն կտա առավել ճկուն մոտեցումներ որդեգրել թրաֆիքինգի դեմ պայքարում՝ այն առավել թիրախային ու ծագող խնդիրներին անմիջականորեն արձագանքող դարձնելով:

4. Կհամալրվի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի տվյալների շտեմարանը, կտրամադրվեն վերլուծական-տեղեկատվական բնույթի տեղեկանքներ, որոնք հիմք կդառնան մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

5. Կհեշտացվի ազգային ծրագրի իրականացման հանդեպ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կողմից մշտադիտարկումը և կհստակեցվեն ծրագրում նախատեսվող միջոցառումների գնահատման չափանիշները:

## VI. Համակարգում

Ռազմավարություն 1. Քննարկել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի և նրան կից աշխատանքային խմբի կազմում ՀՀ պաշտպանության և սփյուռքի նախարարությունների, եկեղեցու ներկայացուցչի, մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ազգային ժողովի մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահի՝ Խորհրդում և աշխատանքային խմբում վերջիններիս ներկայացուցիչների ներգրավման հարցը:

Ռազմավարություն 2. Քննարկել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբում սոցիալական գործընկերների ներգրավման հնարավորությունը:

Ակնկալվող արդյունքները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կազմն առավել ընդգրկուն կդառնա` ներառելով երևույթի դեմ պայքարում ներգրավված բոլոր դերակատարներին:

2. Հնարավոր կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն առավել համակարգված և համալիր ձևով իրականացնել:

Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից` հասարակական ու մասնավոր ոլորտների հատկացումներից, ինչպես նաև միջազգային կազակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական աջակցությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 3-ի N 1140 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

| NN ը/կ | Միջոցառումները | Պատասխանատու և համագործակցող կազմակերպությունները | Կատարման ժամկետը | Հնարավոր ֆինանսավորման աղբյուրները | գնահտման ցուցիչներ | ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում** | | | | | | |
| Նպատակ 1. Օրենսդրական դաշտի կատարելագործում | | | | | | |
| 1.1.1 | Շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հետ կապված` Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտի վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում ՀՀ կառավա-րություն ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության օրենք-ներում, մասնավորապես` Աշխատանքային օրենսգրքում, Սոցիալական աջակցության մասին օրենքում, Զբաղվածության մասին օրենքում, ՙԼիցենզավորման մասին՚ օրենքում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ | ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմին` շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ գլխավոր դատախազություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | օրենսդրական առաջարկությունների և ընդունված իրավական ակտերի քանակը և նպատակը | -կկատարելագործվի Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտը, այն կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության միջազգային հանձնառություններին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | | | |
| 1.1.2 | Կատարել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրան ենթարկված անձանց աջակցության հետ կապված ենթաօրենսդրական ակտերի վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ | ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմին` շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ գլխավոր դատախազություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2010-2012թթ.. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | կատարված վերլուծություններ ի, ներկայացված և ընդունված առաջարկություններ ի քանակը և հարաբերակցությունը | -կապահովվի ընդունված օրենքների առավել արդյունավետ կիրարկումը և կվերացվեն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առկա հակասությունները |
| | **<u>Նպատակ 2.</u> Միջազգային պայմանագրերին միացում, երկկողմանի պայմանագրերի ստորագրում** | | | | | |
| 1.2.1 | Աշխատանք ծավալել ՄԱԿ-ի՝Բոլոր միգրանտ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության՛ վերաբերյալ կոնվենցիային միանալու ուղղությամբ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ | կոնվենցիայի վավերացումը | Առավել արդյունավետորեն կպաշտպանվեն աշխատանքային միգրանտների` որպես խոցելի խմբի իրավունքները |
| 1.2.2 | Աշխատանք ծավալել Եվրոպայի խորհրդի ՝Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին՛ թիվ 93 | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված | կոնվենցիայի վավերացումը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կոնվենցիային միանալու ուղղությամբ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | միջոցներ | | |
| 1.2.3 | Շարունակել աշխատանքները վերջնակետ երկրների հետ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության և դրան ենթարկված անձանց աջակցության տրամադրման նպատակով երկկողմանի համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ | կնքված և մշակման ընթացքում գտնվող համաձայնագրերի քանակը | Առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց աջակցությունը, նրանց վերադարձի կազմակերպումը, ինչպես նաև հանցագործների քրեական հետապնդումը |
| 1.2.4 | Շարունակել աշխատանք տանել աշխատուժի միգրացիայի հարցերի կարգավորման, մասնավորապես` կանոնավոր միգրացիայի հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև` աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շահերը պաշտպանելու նպատակով երկկողմանի միջկառավարական համաձայնագրեր կնքելու ուղղությամբ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2010-2012 թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ | կնքված և մշակման ընթացքում գտնվող համաձայնագրերի քանակը | - կստեղծվեն հնարավորություններ կանոնավոր միգրացիայի համար,<br>- կապահովվեն աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շահերը |
| 1.2.5 | Հայաստանի Հանրապետության քաղաքացի` անօրինական միգրանտների վերադարձի, նրանց վերաինտեգրման կազմակերպման, ինչպես նաև կրկնամեկնման կանխարգելման | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ | կնքված համաձայնագրերի քանակը | - կապահովվի անօրինական միգրանտների անվտանգ վերադարձի ու վերաինտեգրման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նպատակով շարունակել աշխատանքներ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հավանական նպատակակետ հանդիսացող երկրների հետ` երկկողմանի միջկառավարական համաձայնագրեր ստորագրելու համար | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | | | կազմակերպման վերաբերյալ օրենքների ու երկկողմանի միջկառավարական համաձայնագրերի դրույթների կիրառումը |
| | **<u>Նպատակ 3.</u>** Օրենքների կիրառելիության ապահովում | | | | | |
| 1.3.1 | Կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրության` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդիրներին առնչվող դրույթների կիրառման վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ | ՀՀ գլխավոր դատախազություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինան-սավորման աղբյուրներ | կատարված վերլուծություններ ի, ներկայացված և ընդունված առաջարկությունն երի քանակը | - կբարելավվի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղված իրավական դաշտը |
| 1.3.2 | Չխախտելով ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման հարցում ստանձնած միջազգային պարտավորությունները` առավել արդյունավետ դարձնել սահմանային վերահսկողությունը` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտման համար, այդ թվում` նաև տեխնիկական հագեցվածությունն ավելացնելու և կենսաչափական տվյալների արդյունավետ օգտագործման միջոցով | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ | էլեկտրոնային տեղեկատվական համակարգի կատարելագործում, կենսաչափական անձնագրերի ներդրում | - առավել արդյունավետորեն կիրականացվեն սահմանային անցակետերում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված գործողությունները |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | առընթեր ոստիկանություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | ֆինանսավորման աղբյուրներ | | |
| | **II. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում** | | | | | |
| | **<u>Նպատակ 1.</u> Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում** | | | | | |
| 2.1.1 | Շարունակել կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ լայնածավալ քարոզարշավներ, հատկապես ռիսկային խմբերում (գործազուրկներ, արտագնա աշխատանքի մեկնողներ, փախստականներ, կանայք, երիտասարդություն, հաշմանդամություն ունեցող անձանց) | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | քարոզարշավների քանակը, մասնակիցների թիվը, օրինական աշխատանքային իրավունքով աշխատողների թիվը նպատակակետ երկրներում, դիմումատուների իրազեկվածության մասնաբաժինն ըստ աղբյուրների | -կբարձրանա բնակչության, հատկապես նրա ռիսկային խմբերի՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգների մասին տեղեկացվածության մակարդակը, դրա դեմ պայքարելու առկա հնարավորություններ ի մասին իմացականությունը, հետևապես կփոքրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու հավանականությունը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.1.2 | Իրազեկման արշավների արդյունավետության բարձրացման նպատակով վերանայել թերթոնային քարոզչության իրականացման միջոցները և թիրախները, կատարել ազդեցության ուսումնասիրություն և քարոզչության եղանակների առանձնանշում` ըստ թիրախ խմբերի ու քարոզչության նպատակի, նպատակային խմբերի կարիքների ու փոփոխվող միտումների, այն առավել ընդգրկուն և ինտերակտիվ դարձնելով | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2010-2011թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | մշակված նյութերի/մոդուլների քանակը, անցկացված հարցախույզների/ ուսումնասիրությունների քանակը | -կբարձրանա բնակչության, հատկապես նրա ռիսկային խմբերի` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգների մասին տեղեկացվածության մակարդակը, դրա դեմ պայքարելու առկա հնարավորությունների մասին իմացականությունը, հետևապես կփոքրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու հավանականությունը<br>-հատուկ ուշադրություն կդարձվի աշխատանքային թրաֆիքինգի կանխարգելման հարցերին, աջակցություն կցուցաբերվի արտագնա աշխատանքների համար հանրապետությունից |
| 2.1.3 | հաշվի առնելով անօրինական միգրացիայի և աշխատանքային շահագործման (թրաֆիքինգի) առնչակցությունը, բնակչությանը,`<br><br>ա/ տրամադրել արժանահավատ տեղեկատվություն օտար պետություններ մուտքի, կացության, աշխատանքային գործունեության իրականացման կարգերի և դրանցում տեղ գտած փոփոխությունների, ներգաղթային օրենսդրության, ապաստանի տրամադրման հարցերի առնչությամբ,<br><br>բ/ տրամադրել մշտապես թարմացվող տեղեկատվական օժանդակություն բնակչությանը` արտագնա աշխատանքի պայմանների, հնարավորությունների, հնարավոր վտանգների և դրանցից խուսափելու եղանակների մասին | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | ՄՄԿ-ներին, թեժ գծերին դիմողների քանակը, էլ. միջոցներով հարցումներով թվաքանակը, օրինական աշխատանքային իրավունքով աշխատողների թիվը նպատակակետ երկրներում, | |
| 2.1.4 | Միգրանտներին անհրաժեշտ հակաթրաֆիքինգային տեղեկատվական նյութերով ապահովման նպատակով` | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված | քանակն` ըստ ուղղությունների | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | շարունակել ՀՀ սահմանային անցակետերում համապատասխան օժանդակ նյութերի տրամադրում բնակչությանը մեկնման ժամանակ | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>Քաղաքացիական ավիացիայի վարչություն | | միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | | մեկնել ցանկացողներին ճիշտ կողմնորոշելու, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգից զերծ պահելու ուղղությամբ |
| 2.1.5 | Քննարկել և առաջարկություններ ներկայացնել Խորհրդին մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի նպատակով գործող թեժ գծերի միասնականացման, պետության կողմից դրա ֆինանսավորման և օրը 24 ժամ գործարկելու հնարավորությունը | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 2010-2011թթ. | լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում | թեժ գծերի քանակը և գործողության ժամանակը | -կմեծանա թեժ գծերի հասանելիությունը բնակչությանը, կբարձրանա դիմելիությունը, հետևաբար` առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը |
| 2.1.6 | Որպես թիրախ խումբ` կանանց շրջանում իրազեկման բարձրացման նպատակով իրականացնել հակաթրաֆիքինգային տեղեկատվական նյութերի տրամադրում կանանց կոնսուլտացիաներում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | տրամադրված նյութերի քանակը, նյութեր ու խորհրդատվություն տրամադրող կոնսուլտացիանեի քանակը | կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգների մասին տեղեկացվածության մակարդակը, դրա դեմ պայքարելու առկա հնարավորությունների մասին իմացականությունը, հետևապես կփոքրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) |
| 2.1.7 | Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ երիտասարդության իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման | դասընթացների և մասնակիցների քանակ, դասընթացների մասնակիցների ուսումնասիրություն / գնահատումներ,, | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | | աղբյուրներ | հարցախույզերի արդյունքներ | ենթարկվելու հավանականությունը |
| 2.1.8 | Աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանը և մասնագիտական կողմնորոշմանը, տրամադրել խորհրդատվություն ու տեղեկատվություն կրթության, ուսուցման և աշխատանքի շուկայում մասնագիտական գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ, աջակցել երիտասարդի՝ աշխատանքային կյանք մուտք գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | նպատակային ծրարգրերի քանակ, մասնակիցների քանակ, արդյունքում աշխատանքի տեղավորվածների քանակ | - աշխատաշուկայում լրացուցիչ հնարավորություններ ի ստեղծմամբ կնվազեն երիտասարդների՝ արտագնա աշխատանքի մեկնելու հավանականությունը և դրան առնչվող աշխատանքային շահագործման ռիսկերը |
| 2.1.9 | Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում տարածել հակաթրաֆիքինգային նյութեր | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | տրամադրված նյութերի քանակն՝ ըստ ուղղությունների | -կբարձրանա բնակչության իրազեկվածության մակարդակը մարդկանց շահգործման (թրաֆիքինգի) ռիսկերի և զոհերին աջակցության |
| 2.1.10 | Համայնքային և եկեղեցական կառույցների ներգրավում մարդկանց շահագործման | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով | անցկացված միջոցառումների | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, մարդու իրավունքների ոտնահարման խնդիրներին արձագանքելու և զոհերին աջակցության նպատակով առկա հնարավորությունների մասին տեղեկացման և օգտագործման գործում | Սփյուռքի նախարարություն | | նախատեսված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | քանակը, աջակցություն ստացած զոհերի քանակը` ըստ ուղղությունների | նպատակով առկա հնարավորություններ ի մասին |
| 2.1.11 | Միջոցառումներ իրականացնել աշխատանքային շահագործման և մասնավորապես` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկման բարձրացման և դրա դեմ պայքարի մեխանիզմների ուղղությամբ փոքրամասնությունների, այդ թվում նաև` ազգային փոքրամասնությունների շրջանում | շահագրգիռ պետական մարմիններ<br>ՀՀ կառավարության աշխատակազմ<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավոր ման աղբյուրներ | անցկացված միջոցառումների և մասնակիցների քանակը` ըստ ուղղությունների | -կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկվածությունը փոքրամասնություննե րի շրջանում |
| 2.1.12 | Միջոցառումներ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկման բարձրացման և դրա դեմ պայքարի մեխանիզմների ուղղությամբ բանակում և հատկապես խաղաղապահ ուժերում, այդ թվում նաև` բանակում մարդու | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավոր | անցկացված միջոցառումների քանակը, ներմուծված դասընթացը, միջոցառումների | - կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկվածությունը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրավունքների ուսուցման ծրագրերում համապատասխան դասընթացի ներմուծման միջոցով | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | ման աղբյուրներ | և դասընթացն անցած անձանց քանակը, հարցախույզերի միջոցով իրազեկման աստիճանի բարձրացման գնահատման արդյունքները | բանակում, հատկապես՝ խաղաղապահ ուժերի շրջանում |
| | **<u>Նպատակ 2.</u> Բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ իրազեկության բարձրացում** | | | | | |
| 2.2.1 | Վերանայել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության կողմից մշակված ձեռնարկը և անցկացնել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողների համար վերապատրաստման դասընթացներ: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատես-ված միջոցներ և այլ ֆինանսավո րման աղբյուրներ | վերանայված ձեռնարկի առկայություն, անցկացված դասընթացների և մասնակիցների քանակ, դասընթացների մասնակիցների ուսումնասիրությո ւն, հարցախույզերի արդյունքներ | -կբարձրանա բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական և հասարակական կառույցների աշխատողների իրազեկությունը, կամրապնդվեն մասնագիտական կարողությունները և կխթանվի փոխհամագործակցու թյունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերում |
| 2.2.2 | ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման դասընթացներ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում ՀՀ իրավիճակի և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2010-2012թթ. պարբերաբա ր | ՀՀ պետական բյուջեով նախատես-ված միջոցներ | անցկացված դասընթացների և մասնակիցների քանակ, դասընթացների մասնակիցների ուսումնասիրու- | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թյուն, հարցախույզերի արդյունքներ | |
| 2.2.3 | Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակեպությունների համար, որոնք աշխատում են խոցելի խմբերի, հատկապես` կանանց ու երիտասարդության հետ, կազմակերպել ուսուցողական ծրագրեր` մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, ԱՌԻԿ-ի և աջակցության վերաբերյալ նյութերի տրամադրմամբ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2010-2012թթ. պարբերաբար | ՀՀ պետական բյուջեով նախատես-ված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | անցկացված ուսուցողական ծրագրերի ու մասնակիցների քանակ, գնահատման ուսումնասիրությունների/հարցա-խույզերի արդյունքներ | |
| 2.2.4 | Շարունակել կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի վերաբերյալ դասընթացներ`<br>1) ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության աշխատողների համար<br>2) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների և զբաղվածության պետական մարմինների աշխատողների համար<br>3) բուժաշխատողների համար | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2010-2012թթ. պարբերաբար | ՀՀ պետական բյուջեով նախատես-ված միջոցներ և այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | անցկացված դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրու-թյուն` հարցախույզերի արդյունքներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.2.5 | Սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի որակավորման բարձրացման նպատակով ուսուցողական ծրագրերի/մոդուլների մշակում համակարգի քաղծառայողների համար, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման և զոհերին աջակցության հարցերով մասնագետների պատրաստման ծրագրերի ներդրում և համապատասխան դասընթացների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | մոդուլ` 2010-2011թթ. դասընթացներ` 2011-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | մշակված մոդուլ դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրություն` հարցախույզերի արդյունքներ | |
| 2.2.6 | Կազմակերպել հատուկ դասընթացներ մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և երեխաների ցերեկային հոգածության կենտրոնների ուսուցիչների և դաստիարակների համար` երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և աջակցության կազմակերպման վերաբերյալ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրություն` հարցախույզերի արդյունքներ | -կխորանան աշխատանքներն անչափահասների շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման ուղղությամբ,<br>-մանկատներում, հատուկ դպրոցներում և գիշերօթիկ հաստատություններում կիրականացվեն սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրեր,<br>- կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հանդեպ զգոնությունը |
| 2.2.7 | «Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում). ձեռնարկ ուսուցիչների համար» ձեռնարկի | ՀՀ կրթության և գիտության | 2010թ. | ՀՀ պետական | դասընթացների և մասնակիցների | -կխորանան աշխատանքներն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ներդրում կրթական համակարգում և ուսուցիչների վերապատրաստման դասընթացների անցկացում | նախարարություն | | բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրության` հարցախույզերի արդյունքներ | անչափահասների շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման ուղղությամբ |
| 2.2.8 | Երեխաների իրավունքների պաշտպանության կառույցների (Երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներ,) և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակիցների խորացված ուսուցում երեխաների թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման, կանխարգելման և աջակցության կազմակերպման ուղղությամբ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրության` հարցախույզերի արդյունքներ | - կբարձրանա բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական և հասարակական կառույցների աշխատողների իրազեկությունը, կամրապնդվեն մասնագիտական կարողությունները և կխթանվի փոխհամագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերում |
| 2.2.9 | Արդարադատության բնագավառի աշխատողների իրազեկության բարձրացման նպատակով արդարադատության | ՀՀ արդարադատության նախարարություն | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով | դասընթացների և մասնակիցների քանակը, | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բնագավառի և իրավապահ մարմինների վերապատրաստման հաստատություններում ներդնել «Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները» ձեռնարկը և շարունակել անցկացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով դասընթացներ | ՀՀ գլխավոր դատախազություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)<br>ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ) | | նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների մասնակիցների ուսումնասիրություն` հարցախույզերի արդյունքներ | |
| 2.2.10 | ՀՀ գլխավոր դատախազությունում և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունում ներդնել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մոդուլը և մասնագետների վերապատրաստում անցկացնել | ՀՀ գլխավոր դատախազություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | մոդուլի ներդրում` 2010թթ. դասընթացների անցկացում` 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրություն` հարցախույզերի արդյունքներ | |
| 2.2.11 | ՀՀ ոստիկանության մասնագիտական գիտելիքները և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում պատրաստվածությունը բարելավելու նպատակով շարունակել կազմակերպել համապատասխան դասընթացներ` այդ թվում նաև առաջատար փորձ ունեցող երկրներում | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 2010-2012ԹԹ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների և մասնակիցների քանակը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.2.12 | Իրավապահ մարմինների և աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների համատեղ վերապատրաստման դասընթացների, քննարկումների կազմակերպում` աշխատանքային թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման և կանխարգելման արդյունավետության բարձրացման նպատակով | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ գլխավոր դատախազություն | 2010-2012 թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | դասընթացների և մասնակիցների քանակը, դասընթացների մասնակիցների ուսումնասիրությոն` հարցախույզերի արդյունքներ, հայտնաբերված/կանխարգելված դեպքերի քանակը | |
| 2.2.13 | Պարբերաբար մասնակցել միջազգային խորհրդաժողովներին և սեմինարներին, ուսումնասիրել և առաջարկներ ներկայացնել միջազգային լավագույն փորձը և տարբեր խնդիրների լուծման մեխանիզմները ՀՀ-ում ներդնելու վերաբերյալ, այդ ուղղությամբ ակտիվ համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ | 2010-2012թթ. | ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ | | |
